

դուրէ , որպէս զի բարոյական զօրութիւն և արիութիւն ունենայ , որ շատ բարձր և վեր է նիւթականէն . բայց այս զօրութիւնը որո՞ւ միջոցաւ պիտի կարողանայ ձեռք ձգել . միթէ իւր խեղճ և իրեն պէս անգէտ ողորմելի քահանայից կամ վարդապետաց միջոցաւ , որը ժողովրդեան պէս արդէն նոյն բարբարոսաց ահիւն ու երկիւլով պաշարուած թերեւս աւելի պատճառ կը լինին ժողովրդեան և ևս թմբրութեան և անշարժութեան թիւր և սխալքարոզկարդալով , համբերութեան համոզելով զնոսա , թէ այդ կեղեքմանց և զգկանաց դէմ լրելն մեծ և Աստուածահամոց առաքինութիւն է եւ թէ թշնամւոյն դէմ դնողը հակառակած կը լինի Քրիստոսի այն վարդապետութեան , որով կը պատուիրէ թշնամւոյն ամեն ուղածը կատարել և ամեն ըրածին համբերել . առ քեզ այլանդակ Աստուածաբանութիւն , որ զհոգի և զմարմին միանգամայն կը մահացունէ , և այս կը յուսացրուի արդարեւ այն քահանայներէն՝ որոց շատերն պարզ ընթերցումն անգամ չեն կարող շխտակարդալ , ուր մնաց որ Ս . Գրոց միտքըն ու հոգին իմանան և ըմբռնեն և ժողովրդեան ուղղութեամբ ուսուցանեն :

Ուրեմն թէ ինչ միջոցաւ կարելի է կրմել և լուսաւորել մեր հայաստանաբնակ այն ողորմելի և կարելութեամբանի եղայրները , ուրիշ անգամի թողովառ այժմ կը վերջացունենք մեր յօդուածը :

Գ . Ա . Շահանթան :

ՊԱՏՄԱԿԱՆ

(Եաբունակութիւն , տես թիւ 6 .)

Երեք Տէրութեանց դեսպաններուն մեկնիլ :

Արդէն յառաջագոյն ասացինք , թէ յիշեալ երեք Տէրութիւնք լաւ իմացան՝ որ Յունաց համար առաջարկուած խնդիրը չ'պիտի ընդունուի : Երեք գեսպանք ՚ի միասին յայտնապէս ՚ի պաշտօնէ ծանուցազրեր խրկեցին թէ՝ ՚ի կ . Պօլսոց իրենց երկիրը սկիտի մեկնին . որաւն վերայ Բ . Դուռը դարձեալ ժողով կազմելով իւրաքանչիւրին հետ բանակցութեան մատաւ , և հետեւեալ խոստումներն ըրաւ . “ Նրք Յշնք հնազանդութիւն յանձն առնուն , Տէրութեան կողմէն նոցուապատամբութեան վասյօք երբէք բան մի չպիտի խօսուի , և ըստ առաջնոյն Կայսերական ներողութեան և խնամոց արժանի պիտի լինին , և ապստամբութեան օրէն ՚ի վեր իրենց վերայ ծանրացած գլխահարկը եւ Տէրութեան տուրքը բոլորովին պիտի շնորհուին . եւ հնազանդութեան օրէն սկսեալ ամբողջ տարի մի բոլոր պէտք եղած տուրքերէն աղատ պիտի թողուին , և ինքեանք Կայսերական ամեն տեսակ գթութեանց եւ շնորհաց արժանի պիտի լինին : Բայց նաքա ոչ երբէք յօժարեցան յանձն առնոււլ , այլ իրենց առաջնն առաջարկութեանց վերայ հաստատուն մնացին , և վերջապէս երեքն ալ միասին ՚ի կ . Պօլսէն մեկնեցան և իրենց երկիրները գնացին , և յետոյ , նոցա հպատակաց շատերն ալ անափ հալածեցան :

Ռուսիոյ դաշնապրութեան չուծելը .
և, կայսերական բանակին եցը :

Արդէն յայտնի իմացուած էր՝ որ
երեք Տէրութեանց առաջարկութիւնը
չընդունելուն պատճառաւաւ, նենդու-
թեամբ թշնամութիւն և պատերազմ
պիտի հրատարակուի. Դեսպանաց մեկ-
նին զայս աւելի հաստատեց : Ուստի
Օսմաննեան Պետութիւնը մինչդեռ
ձեռնարկած էր արթնութեամբ եւ
դգուշութեամբ պէտք եղած ամրու-
թիւնները փութոյ պնդութեամբ յա-
ռաջ տանել, ահա նոյն տարւոյ լէվալ
ամսոյ 23 ին Սիլիստրէի կուսակալ Ահ-
մէտ փաշան գրալ կը ծանուցանէ թէ
Ռուսաց զօրքը համարձակեցաւ կայ-
սերական սահմանադրուխ Փրութ գե-
տը անցնիլ և Պուղտանի երկիրը ար-
շաւել : Ռուսիոյ այս ընթացքը ՚ի նր-
կատի ունելով, և օգնութեամբ Բարձ-
րելցն անմիջապէս անոնց վերայ եր-
թալու և վոէմխնդիր լինելու նպատա-
կաւ, Պրուսայի նահանգին կուսակալ
Հիւսէին փաշան Կայսերական բանա-
կին սպարապետ որոշուեցաւ, և Դա-
նուբի կողմերը երթալու համար, բազ-
մութեամբ զօրաց վիճապէտ ամսոյ 5 ին
երկուշաբթի օրը Տալսուտ փաշայի դաշ-
տէն մեկնեցաւ և իւր պաշտօնատեղին
գնաց : Մանուրէ կոչեցեալ զօրաց ըս-
պարապետ Խուրշիւտ փաշայի գանձա-
պետ Միլիմերան Խ սլլլ Ռիֆաթ փաշային
վէզիրութեան աստիճան չնորհեցաւ,
և յիշեալ զօրաց սպարապետի փոխա-
նորդի տիտղոսով, զինարանի վերա-
տեսուչ Սայիսկ էֆէնտիին նշանձիութան
աստիճան տրուելով կայսերական բա-
նուկին վերատեսուչ հրատարակուե-
ցաւ, և Մանուրէ Մուհամմէդիկ կոչ-
եցեալ հետեւակ և ձիաւոր զօրաց բազ-
մութեամբ յիշեալ ամսոյ իններորդ օրը

նոյն դաշտէն մեկնեցան Հիւսէին վա-
շային երթալ միանալու համար :

Ռուսաց Պանութ գետը անցնիլն :

Ա.յա ամենէն յետոյ դարձեալ Ակ-
լիսարէի կուսակալը հետեւեալ տրոտ-
մատիթ լուրը Բ . Դրան կը հազրրէ,
“Ռուսք կայսերական սահմանը անցան
և իպրայէլ բերդը պաշարեցին, և վէ-
գագի ամսոյ քսան երեքին ՚ի դիշերի
իստիճայի բերդին վարի կողմէն Պանու-
թի կողմն անցան, և նոյն տեղ գլու-
նուած իւլամ զօրքն ըրկարենալով թըշ-
նամւոյն գէմ դիմագրաւ լինիլ, ամօ-
թապարտ ՚ի փախուստ դիմեց, և այս
պատճառաւ Ռուսք յիշեալ բերդը
գրաւեցին ո : Ա.յա գէպքը, որովհե-
տեւ բերդապահ Փաշային եւ ուրիշ
զօրապետաց անմիաբանութենէ յա-
ռաջ եկած էր, Փաշան և զօրապետ-
ները, ըստ տրամադրութեան կայսե-
րական հրովարտակին, ՚ի խրատ և ՚ի
դգուշութիւն այլոց ՚ի սուր մատնեցան
եւ զի նուրիտական պարտաւորութիւն
էր թշնամւոյն գէմ կարեւոր պատրաս-
տութեանց միտ դնել եւ զայնս առ-
հարկի անօրինել, վասն որոյ Զերմէնի
կառավարիչ Էսաստ փաշան բազմու-
թեամբ զօրաց կայսերական բանակը
խրկուեցաւ . և ծովապետ Մէհէմմէտ
փաշան նաւատարմիղը Պէօյիս պէրէ
թողով պէտք եղած զօրքերով Վառ-
նայի կողմերը գնաց : Սցն միջոցիս ար-
ժանաւոր անձանց տանց Միլիմերա-
նիւան աստիճան տրուելով կայսերական
բանակը և ուրիշ հարկաւոր տեղեր
խրկուեցան բանակին, և այլ տեղեւոց
ըստ յարմարութեան իջեւանի վերա-
կացուներ որոշուեցան :

Ռուսաց Խպրայիլի բերդը զրածվն :

Կայսերական բանակին Սոլարապե-
տըն գրով կը ծանուցանէ, թէ Ռուսք

Համարձակութիւն գոտան Խոյսիկ բեր. Դը կարի ՚ի նեղ արկանել, և բնակիչք չը կարենալով երկար տոկալ, անձնատուր եղան, և վլհիճճէ ամսոյ վեցերորդ օրը բերդը յանձնեցին. Խոյսիկ բերդի նման ամուր և հաստատուն և ամենայն կարեւոր կազմածովք կատարելապէս կարգաւորեալ եւ յարդարեալ բերդ մի, այս եղանակաւ յանձնուելուն համար, թագաւորը առ զայրոյթ սրտին, հրաման ըրաւ որ նոյն պահուն վէզիր Ախւլէյման փաշան, և այլք, որք այս վնասակար գործոյն առիթ եղած են ՚ի սուր մատնուին. բայց վերջին առնուած տեղեկութեանց վերայ, որպէս թէ Ռուսք խրամները քակեր և աւերեր են, եւ այնուհետեւ անհնարին եղած է անդ անշարժ կենալ և բերդը պահպանել, ուստի յակամայից բռնադատեալ անձնատուր եղած են. Ախւլէյման փաշայի մահը ներուեցաւ, և գործը բարւոք ստուգելու համար որոշուեցաւ զայն ՚ի կ. Պօլիս կոչել. զինի գալստեան մերիացուցին և զրկեցին զայն յաստիճանէ Վէզիրութեան, և ՚ի Միտիլէ կղզին յաքսոր դատապարտեցին. և որովհետեւ այս ձախորդութեանց վերայ խիստ կարեւոր էր կայսերական բանակը օր քան զօր ստուարացնել և ամրացնել. ուստի Ակրի Մահմուտ փաշայ, որ Պրուսայ նստիլ որոշուած էր, Սիլիստրէի և Վէտինի կողմերը, Էօմէր փաշայ՝ բանակը, Գարամանի կուսակալ Էմինի փաշայ Կայսերական բանակին յառաջապահ զօրաց վերայ, և Տէրվիշ փաշան, որ Ֆիլիպէ նստիլ որոշուած էր, Սիլիստրէի և Վէտինի կողմերը, Էօմէր փաշայ՝ բանակը, Գարամանի կուսակալ Էմինի փաշայ Կայսերական բանակին յառաջապահ զօրաց վերայ, և Տէրվիշ փաշան, որ Ֆիլիպէ նստիլ որոշուած էր, Պալֆան լերանց պահպանութեան խրկուեցան:

Առումն Մաջլն եւ Քէօթէննէ բերդից:

Ոռուոք բազմութեամբ զօրոց Մա-

ջն եւ Քէօթէննէ բերդերուն վերայ յարձակեցան. իսկ պահապան զօրքը թէ եւ գիմաղբաւ զանոնք վանելու մեծամեծ ջանքեր ըրաւ, սակայն բնտիչք չը համբերելով՝ բերդը յանձնեցին և մեծաց անիծից արժանի եղան.

Այս եւ այլ յաղթոթիւններ:

Օգնութեամբ Բարձրելցն Աստուծոյ՝ յաղթութեան և վրիժառութեան փառքը յայտնապէս սկսաւ Օսմաննեան կողմը երեւիլ. Ալիշ փաշայ՝ որոյ Միտրանութեան աստիճան չնորհուած էր, իւր հրամանին ներքեւ գտնուած հետեւակ և հեծեալ յաղթական զօրքերով Գոռ-Ղէլէ կոչուած տեղը հասնելուն պէս, Ռուսաց զօրքը բազմութեամբ միահաղցն գրոհ տուեալ յարձակեցան նորա վերայ, զայն տեսնելով Իւլան զօրաց քաջապէս զննեալ դիմագրաւ եղան անսնց, եւ պատերազմը շարունակ հինգ ժամ տեւեց. յաղթութեան և ուրախութեան փառքը Օսմաննեանը ժառանգեած էր կոչուած անդեցին, եւ Ռուսաց զօրքերէն հաղար հինգ հարիւրի չափ ՚ի սուր սուսերի մաշեցան, եւ մնացեալները ցիր ու ցան փախստական եղան, և այս արիւնահեղ պատերազմի ժամանակ Իւլան զօրքերէն մի միայն վեցեկոթը անձնոնք ինկան. Նմանապէս սոյն միջոցին յանդիման Վիտինի Գալաֆաթ կոչուած տեղը անթիւ զօրքեր եկած լինելով, այն կողմերը գտնուած Իւլան զօրքը արիւրթեամբ և վրէմիսն դիր հոգւով թշնամոյն վերայ յարձակեցան եւ յաղթութեան դրոշ կանգնեցին. Եւ ՚ի վերջոց Ետաւընեփէ և Սիլիստրէին ինն ժամ հեռաւորութեամբ Գոռ-Ղուն կոչուած տեղերը եղած պատերազմներուն, գարձեալ յաղթութեան փառքը Օսմաննեանց կողմը փայլեցաւ. իսկ Ռուսաց դրոքը

խորտակուելով մնացեալները փախրու-
տական եղան : Սցն ժամանակին բառ
գրութեան զօրապետաց Վառնայի կող
մըն եւս , յաղթութեան անունը Օռ
մանեանց կողմ լինիլն հռչակուեցաւ :

(Եարաւակիլէ :)

ԶԱՅՆԱԳՐԵԱԼ

ՇԱՌԱԿԱՆ

ՀՈԳԵԿՈՐ ԵՐԳՈՑ

Առ-ը և Ո-ւշեաւ Առաքելական Եկե-
ղե-ոյ Հայաստանեայց . յօդինեաւ ՚ի Սրբոց
Թարգմանչացն եւրոց և ՚ի Սրբոց Հայրապետաց
և ՚ի Վարդապետաց :

Ի Վ. Ա. Ռ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Ի Տպարանի Ս. Կաթողիկէ Էջմիածնի
1875- Ռ Յ Ի Ե .

ՇԱՐԱԿԱՆՆ՝ Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ հոգենուագ երգոց միակ նը-
ւագարանն , Արքասուն Հայրապետաց
և վարդապետաց Աստուածային սիրոց
և կրօնասէր զգացմանց միակ պահա-
րան և յիշատակարանն լինելով , որքափ
որ իբրեւ նուիրական Մատեան նկա-
տուած և ընդունուած է մեր Ռոգին
մէջ , այսու ամենայնիւ իւր եղանա-
կաց և բարեպաշտական եռանդ և ա-
ւիւն ազդող ներդաշնակութեան մէջ
բազմադիմի տարբերութիւններ եւ
խառնուրդ , թերեւս յակամայից , տե-
ղի ունեցած են , կ'ունենան հետղիւտէ
և կարելի է ցառօք սրտի ասել , որ յետ
ժամանակաց խոպառապուռ փոխիխու-
թիւն և նախկին սրտագրաւ և հոգե-
զուարձ եղանակաց կորուստ մի սիրտի
տեսնուէր :

Սակայն անպատճեմ խնդութեամբ
տեսանք , որ Ս. Էջմիածնի Մայր-Ա-
թոռն , Աստուածարեալ Հովուապետի
ջանիւք , փութացած է այս ցաւալի
վախճանին առաջն առնուլ , ամբողջ
Շարականն ձայնագրութեամբ տպա-
գրել առաջիկ , որոյ մի օրինակն ևս Ս. Ա-
թոռոյս նուիրուած լինելով՝ տեսանք :

Թէեւ՝ Սցն Շարակենոցը , որ 1090
երեսէ կը բաղկանայ , մեծ գործ մի լի-
նելով , իւր եղանակաց դրութիւնն
քննադատելու համար երկար ժամա-
նակի կարօտ էր , և չեմք կարող ասել
որ ըստ ամենայնի նախնական եղանա-
կաց Ճշգութիւնն ունի . սակայն լոկ
աշխատութեան ծանրութիւնն , դըժ-
ուարութիւնը և նպատակը միայն նը-
կատելով կը խոստովանիմք , որ մե-
ծամեծ գովեստից և փառաց արժանի
է . վասն զի , ինչպէս կը տեսնուի իւր
Յառաջաբանէն , այսու աշխատութիւն
Վեհափառ Հայրապետի նպատակն ե-
ղանակ նախնեաց եղանակներն , եթէ
ոչ սկզբնական Ճշգութեամբ , գէթ
այժմեան վիճակով պահպանել եւ ա-
պագայ խառնուրդներէ և աղճատում
ներէ զերծ կացուցանել և ամեն Հայ-
աբնակ գաւառաց և Հայ-Եկեղեցեաց
մէջ , որքափ հնար իցէ եղանակի միու-
թիւն և նոյնութիւն պահել : Ուստի
քաղցր է մեզ խոստովանիլ , որ այսու
մեծ աշխատութեամբ Համագոյշին
Մայր-Աթոռն , Շարականի հոգեբուղժ
նուազներն երգող և երկասիրող քրտ-
նաջան Հայրապետաց երախտագիտա-
կան պարոք մի , Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ փառաւոր և գովելի ծառայու-
թիւն մի մատուցած և թէ իւր եւ
թէ Բարեխնամ Վեհապետի անուան
յաւիտենական յիշատակ եւ անմահ
արձան կանգնած է :

Ի ցիւ թէ յաջողէր Նորին Վեհա-
փառութեան նպատակը , որով բողոք